Արձանագրություն N 26/2-4

«ՔԵՆԴԼ–ԳՀԾՁԲ-26/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 08 դեկտեմբերի 2025թ. Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Մ. Գյուլումյան,
անդամներ	Ա. Վարդանյան, Ստ. Թաթիկյան, Գ. Ամատունի
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Բաղրամյան

ՔԵՆԴԼ – ԳՀԾՁԲ - 26/2 ծածկագրով մրցույթի հայտերի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով մրցույթի մասնակից «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ի 05.12.2025թ. գրությունը, իր 05.12.2025թ. նիստում կայացրած որոշմամբ դիմեց մրցույթի մասնակիցներին լրացուցիչ ներկայացնել Անվտանգության ապահովման (Պահնորդական) ծառայություններ մատուցելու մասով իրենց նախորդող հինգ տարիների մասնագիտական փորձառությունը, ինչպես նաև հրավերով սահմանված՝ Պահնորդական ծառայության տեխնիկական նկարագրում ներառված այլ պահանջները:

Մասնակիցներից 08.12.2025-ին ստացվել է հետևյալ տեղեկատվությունը՝

1-«Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ն ներկայացրել է պահանջվող 5 տարիների մասնագիտական փորձը՝ կնքված պայմանագրերի տեսքով, ինչպես նաև ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված «Զենք և փամփուշտներ պահելու և օգտագործելու» թույլտվությունը;

2-«Արմգվարդիա Միջազգային կազմակերպություն» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն առ այն, որ ներկայումս չեն կարող ապահովել հնգամյա մասնագիտական փորձառության պահանջը, քանի որ գործունեությունը սկսել են 2025թ.-ին, ինչպես նաև չունեն զենք պահելու և օգտագործելու սահմանված ձևի թույլտվություն:

Հանձնաժողովը որոշեց՝ **Որոշում N 26/2-4**

1. «Արմգվարդիա Միջազգային կազմակերպություն» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հրավերի պահանջների չհամապատասխանելու հիմքով:
2. ՔԵՆԴԼ-ԳՀԾՁԲ-26/2 ծածկագրով ընթացակարգի **ԸՆՏՐՎԱԾ** մասնակից ճանաչել մրցույթում երկրորդ տեղ զբաղեցրած «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ-ին:
3. Գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել գնահատող հանձնաժողովի 08.12.2025թ. նիստի արձանագրությունը, ինչպես նաև Հայտարարություններ՝ գնահատող հանձնաժողովի անդամների շահերի բախման բացակայության մասին, ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու որոշման մասին և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետը 10 օրացուցային օր է:
5. Տվյալ գնման ընթացակարգը իրականացվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև Համաձայնագիր կնքելու դեպքում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Միքայել Գյուլումյան

Անդամներ՝ _____ Աշոտ Վարդանյան

_____ Ստեփան Թաթիկյան

_____ Գայանե Ամատունի

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Արծրուն Բաղրամյան